

**Հրապարակում՝ aysor.am կայքում**

2017թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում հաստատվել են 6 նոր ծրագրեր, որոնք ընդգրկում են բնակչության բոլոր տարիքային խմբերը՝

1. ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառում
2. ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադա
3. Հանրապետական ուսանողական մարզական խաղեր
4. ՀՀ գյուղական մարզական խաղեր
5. Տարեցների հանրապետական խաղեր
6. Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթ

Տեղեկացնում ենք, որ 2016 թվականի հոկտեմբեր ամսից անցկացվում են «Կյանքը՝ սպորտի ու խաղի միջոցով» մասսայական ամենշաբաթյա, անվճար մարզումները: Յուրաքանչյուր մարզմանը միջին հաշվով ներկա են լինում 100 մարզվող: Բացօթյա մարզումներն անցկացվել են Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից տարածքում, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնին հարակից այգում և «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության «Սպարտակ» մարզադահլիճում:

Ոլորտի զարգացման և մասսայական սպորտի զաղափարների արմատավորման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման վերաբերյալ ազգային ծրագրի մշակման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, բաղկային սպորտի զարգացման հայեցակարգի մշակման նպատակով նախարարությունում հավաքագրվում է տեղեկություն՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում եղած խաղահրապարակների և բակերի մարզական հնարավորություններին վերաբերյալ, սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգի մշակման նպատակով ստեղծվելու է միջգերատեսչական հանձնաժողով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից, ավանդաբար կազմակերպվում է ՀՀ Նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն», «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ», «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» ամենամյա մրցույթները, որոնք 2016 թ. ունեցել են տարբեր տարիքային և սոցիալական խմբերը ներկայացնող շուրջ 10 հազար

մասնակիցներ: Միաժամանակ շարունակվում է անցկացվել ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական ամենամյա մարզական փառատոնը՝ 22.000 մասնակցով, իրականացվում են նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը՝ 30.000 մասնակցով:

Նախարարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում Հաշմանդամային սպորտին, որին առընչվող ծրագրերին 2016 թ. մասնակցել է 61.500 անձ: Բացի պետական միջոցներով կազմակերպվող միջոցառումներից ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում է կազմակերպվել նաև Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի սաների մասնակցությամբ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին, որին մասնակցել է 20 երեխա: ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությունում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում, որին մասնակցել են կենտրոնի 53 երեխաներ և երիտասարդներ:

Նախարարություն կողմից մարզական-մասսայական միջոցառումներ են կազմակերպվել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ կանանց համար, որին մասնակցել են 80 կին դատապարտյալներ: Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի առթիվ սեպտեմբերի 19-ին Նելսոն Ստեփանյանի անվան № 71 դպրոցում անցկացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը՝ 5-6-րդ դասարանների աշակերտների միջև: Մրցույթին մասնակցել են 5 հանրակրթական դպրոցների 60 աշակերտներ: